

All these remarks spring, I think, from the desire to sustain the fourth-century date.

In the catalogue of bronzes it is allowed that « the hand, from its style and the condition of the bronze appears to have belonged to this statue. » It is added however, « on these grounds it has been argued that the original was a copy of the Cnidian Aphrodite, but it is by no means certain that the head represents Aphrodite. »

(**Ընդգծումնելին իմա են:** — Ա. Յ.)

W. R. LETHABY, «An outline History of Armenian Architecture» in the Journal of the Royal Institut of British Architects, 1922, vol. XXIX N. 19.

Յոյն արուեստի այս գեղեցիկ փշրանգը  
B. Museum ում ցուցադրուելու թուակա-  
նից (1873) յետոյ թւում է թէ շահագրզո-  
ռուղներ ուշադրութեան առած են զիւտի  
մասին բոլոր կարծիքների պատմութիւն-  
ները որոնք, ինչպէս երեսում է ինկէլմանի  
խօսքից, «Հետաքրքրական են եղել, այն էլ  
դեռ այլ և այլ մասամբ» : «Բազմավկապ»՝ որ-  
պէս հայ բանասէրների այն ժամանակուան  
(1883) միակ ուսումնաթերթը՝ ինկէլմա-  
մանի քննաստիրականը թարգմանաբար տա-  
լէ յետոյ այդ հարցի շուրջ լոյս տեսած  
այլոց էլ ուսումնասիրութիւններիցը ցաղե-  
լը թւում է աւելորդ է համարելու այլապէս,  
«Բազմավկապ»՝ հետագայ ուսանողների հա-  
մար մեծապէս գնահատելի գործ կատա-  
րած կը լինէր և, իցէ թէ, ինկէլմանի  
համար անկարեւոր համարուած բաներ  
հնար կու տային մեզ լոյս սփոել վաճա-  
ռական Castellani ի Վարկածների վրայ,  
որոնց՝ մի անգամ էլ կը կրկնեմ, ինկէլ-  
ման իւր քննաստիրականի հէնց սկզբում  
դեռ ասում է «ոչ բողորովին վատահեշի  
վկայութիւն այն անձի որ յԵրովա բերեր  
է հնութեան այս երես կառուներո » :

Էնկէլման՝ արձանագլխին հետ ի ցոյց  
դրուած ձեռքին էլ միեւնոյն միաւորին  
պատկանած լինելուն շուրջ յարուցուած  
կասկածների դէմ խմբագրած իւր փաս-  
տարանութիւններով թէեւ հաւատում է  
որ զբանց երկու տարբեր միաւորների

მასხელ გხნ, რაյց, ჩქნე აյսთხო ცლ ცლ-  
მე ანდამ მხერანალათის მხერამე ართა-  
უამოւამ է აუს მარყონი ღია კურკესი (ჩამა  
Castellani ი) იყოს ასეთ ანგაძ სი ნე-  
რამის მხერან აუს ფივრები ჩრენე კონისხელი  
ქარგ: ზოტა ც დალხ ილ Castellani ი თვ-  
მე ანდამ ხელან ჩანხლ է აუგ ნერამის-  
ხელ, აულ ხელ კარგები მსხვ იურჩე ასეთ გერელ է:

ილ, ჩარგ ცლ მავს აუგ მსხვ იურჩე ს-  
ხელ კასტარა დ გრისტ აკარა დანხელ ნ. მ მ-  
რან დამრან ხელი ჩასა აუნ antiquary  
ილ. Castellani ი ჩასა გამოიყე მას კა-  
რელ. ჩოსა კ ეხთი ცლ « დრერ იუსტ ჰუსოვ  
ასეთ ხელ (ზემდევ. 1883. გ 130) ე წლების-  
თვე ისტილის გა ჩრენე ჩართვა მ მ მ

ի վերջոյ, ինկէլման իւր քննասիրականի ախճանին երբ ասում է . « Դժուարին է լուցել րք ինչպես այս արձանս Հայաստանի ուղ հեռաւոր կողմերը զետցեր ե . և բրադրելով որ տեղոյն համար ( Սատաղայի ) լսուածն աշխի է եւ ոչ թէ ձշմարտուրինը քօդարկերու նարք մը » : Յայտնի է թէ կասկածում է Castellaniի ասածին : B. Museum ում այս կարգի հարցերի մէջ ձեռնհաս աշխատակիցներ եթէ դոյզն չափով էլ վստահելին Castellaniի վարկածներուն, այն աշխալուրջ թանգարանի տեսչութիւնը 60 արուց ի վեր նորից լոյս ընծայած իւր օգալոցւ ներում չէր գրեր անփոփոխ, չոր և ցամաց « կ'լսուի թէ ի Հայաստան գլուխուած ե » : Այս « կ'լսուի թէ »ով կասկածի ամակ մնացել է վարկածին վաւերականութիւնը և հարցը թողուել է աւելի ձեռնասների օննութեան :

Հարցին մէջ Հայաստանի պնունը առաջ շուրած լինելով մենք՝ որպէս ուղղակի շա-  
ազգութեած կողմ՝ պէտք էր որ աւելի ե-  
անդուն և հետեւղական հետաքրքրութիւն  
ոյց տուրած լինէինք ճշտելու համար վար-  
ածների ստուգութիւնը։ Աբդ, խօսեն ա-  
ելի շատ գիտցողներին է։ ևս ուզում եմ  
ովորեմ։

20 Dwight Str.  
Boston Mass.  
(U. S. A.)

## ԴՐԱՄԱԿԱՑ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ 70-ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆԸ

## ՊԱՏՄԱ - ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(Եար. տես Բազմավէպ 1983, էջ 544)

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿԵՏ

Ի՞նչ եղ գրում Լէօն և Մ. Աղաբէկեան

Լէօ : Թատրոնական պատմագիրներից  
Լէօն կանգնած է որոշ գծի վրայ : Այդ  
գիծը, սակայն, միանգամայն անորոշ է՝  
որովհետեւ նա արձանագրել է միմեան-  
ցից տարբեր և իրար հակասող կարծիք-  
ներ :

Նրա առաջին եզրակացութիւնը հաստա-  
տում է, թէ Ռուսահայ թատրոնն սկիզբ  
է առել 19-րդ դարի երեսնական թւա-  
կանների առաջին կէսերին, 1836 թւա-  
կանին. Թիֆլիսում:

Ո՞րն է, սակայն, Լէօի աղբիւրը, ի՞նչ  
դոկումէնտից նա քաղել է իր տւեալները:  
Նրա աղբիւրը, ակունքը թատրոնական  
հին գործիչ Մարկոս Աղաբէկեանի դասա-  
խոսութիւնն է, որ Կարդացել է նա 1879  
թւականի Յունիսի 15-ին կարնոյ դպրո-  
ցի դահլիճում «Հայկական քատրոնի ան-  
ցեալը» խորագրով։ Դա հայ թատրոնին  
նուիրուած առաջին դասախոսութիւնն է։  
Լէօն համարեա նոյնութեամբ կրկնել է  
«Փորձ»ում (թ. 10) տպւած այդ յօդ-  
ւածի միտքը։ Մեր ասածը հաստատելու  
համար նախ տեսնենք, թէ ի՞նչ է զրում  
Աղաբէկեանը։

Աղարքեկեանի լուսաբանութիւնը։ Աղարքէ-  
կեանը Թիֆլիսի հայ թատրոնի պատմու-  
թեան սկիզբը համարում է 1836 թւա-

կանը : Սակայն նա իր տեսակէտը չի հիմնաւորում փաստացի տւեալներով, այլ միայն յիշողութեան վրայ հիմնւելով՝ արձանագրում է իր կարծիքը :

Առհասարակ պիտի նշել, որ թատրոնական պատմագիրների շարքում Աղարէկեանը շատ բարեխիղճ է : Մանաւանդ թւական տւեալներն ու պատմական փաստերը նա արձանագրում է խիստ վերապահութեամբ : Ահա նրա յիշատակագիրը Ռուսահայ թատրոնի սկզբնական շրջանի մասին,

— «Ինչպէս որ Ալեւմտեան հայոց թատեր վրայ միմիայն յիշողութեանս ապաւ կինելով իսուսեցայ, առանց մի աղքիւր իմ աշքի առաջ ունենալու, այնպէս էլ Արբեւլեան հայոց՝ այսինքն Թիֆլիսու հայոց թատեր մասին պիտի անսմ միեւնոյն պատճառով. կարելի է, որ թւականի եւ անունների մասին շփոթւիմ, գրանց որոշ յիշելը անկարող լինելով, այդ մասին ներողութիւն եմ խնդրում իմ պարոնայցք:

Թիֆլիսում առաջին անգամ թատր յօրինողն է լինում, նոյնիսկ Թիֆլիսու հայոց կեանքէ վեր առնելով, պ. Գալուստ Շերմազանեանցը, բայց անփորձ թատերական արհեստում, նա կարծել է թէ՝ թատր ձեւացնել կամ թէ մի անցք կամ դէպք խաղի առնելը, միայն մի քանի անձինքների միշտում մի խօսակցութիւն է հարկաւոր սարքել մի ապօրէն գործ կատարելու համար։ Այդ հայեցածքով իր թատեր առարկայ է

սուել նոյն քաղաքի առաջնորդ կարապետ եպիսկոպոսին, որ երբեմն առաջնորդ եղաւ քաղմաթիւ հայոց ոչ միայն հովւելու, այլ և քրիստոնէից մեղրաբուխ երկիրը տանելու, որպէսզի լոյս տեսնան այնտեղ։ Առարկայ էր արել նաեւ կշմիածնի սինօդն ու Ցովհաննէս կաթողիկոսը, ոռւսաց կառավարութիւնը, Թիֆլիսու հայոց ժողովուրդը և այլն։ Թէեւ հետաքրքրական կարողացել է անել իր հատւածը, այն ժամանակի եղեղեցական անկարգ ընթացքը դուրս բերելով, ամէն մէկ գաւառացի հայն իր բարբառով խօսեցնելով, ոռւսաց կառավարիչները պաշտակեր ցոյց տալով, բայց հատւածի պատակն աւելի մի պարսաւ է իր հանդէս դուրս բերած անձինքների վրայ, քան թէ բանց բնական պատկերը, թէեւ այն զեղծունքներում եւ մոլորութեանց մէջ, որ կարագրում է իր ժամանակւայ անձինքը և այսօրւաններն էլ այդ յանգի վիճակէն արբեր վիճակում չեն։ Այդ եղելութիւնքը եղի են ունենում 1836 թւերում. թատրը աղացւում է, ասում են առաջին անգամ ոյնիսկ հեղինակի տանը մի դարպասում է կամ երկու տարուց յետոյ։ Իմ գիտածն՝ այդ կերպով է սկսում թատերան նոր նիստը Թիֆլիսու հայոց մէջ։

կարո՞ղ ենք Աղարէկեանի այսքան բարեխիղճ խոստովանութիւնից յետոյ, նրա արձանագրութիւնն ընդունել իրեւ պատմական ձշգրիտ աղբիւր։ Պատմական այդ դօկումէնտն ինչքան էլ արժէքաւոր եւ հետաքրքրական լինի հայ թատրոնի պատմութեան համար, այնու ամենայնիւ, չենց կարող ոռւսահայ թատրոնի ծագման հիմքը ընդունիլ, քանի որ հիմնւած է ոչ թէ իրական, փաստացի տւեալների, այլ սոսկ յիշողութիւնների եւ ենթազրութիւնների վլայ, ինչպէս այդ արձանագրում է հէնց ինքը՝ Աղարէկեանը — «միմիայն յիշողուրեանս ապաշինեղով խօսեցայ... առանց մի աղբիւր իմ աչքի տուած ունենալու... կարեղի ե, որ բականի և անունների մասին յինորակում»։

Բայց տեսէ՞ք, Լէօն հետազայում ինչ-  
պէս է օգտագործում Աղարէկեանի միմի-  
այն յիշողութեան վրայ հիմնւած պատմա-  
կան այդ դասախոսութիւնը։ Նա, 1904

թւին, իր « Ուոշտահայ զրականութիւնը » պատմութեան մէջ ( էջ 100 ) կրկնելով Աղաքէկեանի՝ մտցերը, տալիս է այսպիսի պարզաբանութիւն.

— « ... Բայց ահա երեսնական թւականների վերջում գրվում է ոռուսահայերի առաջին ինքնուրոյն թատրոնական երկը : Գալուստ Շերմազանեանը թատերագրութեան ձեւով մի պարսաւ է յօրինում, որի մէջ դուրս բերված են ժամանակակից անձինք . հայոց հոգեւոր վարչութեան գլխաւորները, նրանց զեղծութերը, պետական պաշտօնեաների կաշառակերութիւնը - այս է լինում այդ գրւածքի նիւթը և նա ներկայացնվում է նոյնիսկ Շերմազանեանի տանը... իբրև սկզբնաւորութիւն, շատ ուշագրաւ երեւոյթի հանգամանք ունէր... Մեր կենցաղային կատակերգութեան նախահայրն էր դա»<sup>1</sup> :

Սա Լէօի առաջին վարիանտն է: Կայ  
այդտեղ նորութիւն, քննադատական նոր  
ուսարաննութիւն: Կարո՞ղ ենք նրա կըրկ-  
նութիւնը ելակէտ ընդունել: Դժբախտա-  
ար, ո՞չ: Նա ամենայն հարազատութեամբ  
արձանագրել է Մ. Աղաբէկեանի մտքերը:  
Միայն այդքան: Բայց Լէօն դրանով էլ  
ի սահմանափակում իր « հետազոտու-  
թիւնը ». մոռանալով իր առաջին վա-  
րիանտը, նա իր « Ուսահայ գրականու-  
թիւնը » գրքի նոյն երեսում յայտնում է  
իր այլ տեսակէտ.

— «Սակայն թատերական գրականութիւնը ոչ թիֆլիսում, ոչ կ. Պոլսում կամ Հմիւնիայում պիտի սկիզբ առնէք Այսուեղի էլ առաջին խօսքը պատկանում էր Տիփթարեան հայրերին:

1845 թւականին Վենետիկում լոյս տեսաւ «Խոսրով Մհեմ» ողբերգութիւնը հինգ սրարուածով, հեղինակութիւն Հ. Պետրոս Լ. Մինասեանի »:

ի՞նչ է ասում Լէօն իր այս երկրորդ  
արիանտով։ Բացարձակապէս հերքում է

1. Այս վարիանտի տակ կէօն զրում է. «Փորձ»  
Խաղիր, 1879 թ. 10. եր. 63։ Պարզ է, որ աղքիւրը  
• Աղաբէկեանն է. Ա. Ե.

իր ստորագրած առաջին տեսակէտը։ Ն գտնում է, որ թատերական գրականու թեան նախահայրը ոչ թէ Շերմազանեան պարսաւը պիտի ընդունել, այլ, համաձայն երկրորդ վարիանտի, « Խոսրո Մեծն »։ Ուրիշ խօսքով՝ ոչ թէ 1836 այլ 1845 թւականը։ Սակայն ինչու ի՞նչ հիմքով։ Այդ մասին Լէօն լոռում է

Բայց թողնենք Լէօի այդ հակասութիւնը։ Որուսահայ թատրոնի սկզբնաւորութեան մասին նա ունի իր երրորդ «հեղինակաւոր» կարծիքը։ Նոյն գրքը 106-րդ երեսում նա գրում է, որ հայերէստառաջին ներկայացումը տրեել է Մոսկվայում 1859 թւին։ Ահա նրա դոկումէնտը

— «Դարձեալ հայ ուսանողներն էին, որ  
հայկական թատրոնի հիմքը դրին Ռուսաս-  
տանի հայերի մէջ: Առաջին հայերէն ներ-  
կայացումը տեղի ունեցաւ Պոսկվայում  
այնտեղ, ուր սկիզբ է առել մեր հրապա-  
րակախօսութիւնը, ուր ծաղկեց մեր բա-  
նաստեղծութիւնը:

1859 թւականի յունվարին մի խումբ  
ուսանողներ Մօսկվայում բնակող մի հա-  
րուստ հայի տան մէջ տուին ներկայացում  
խաղացին Վանանդեցու «Արխստակէս» պատ-  
մական ողբերգութիւնը... «Արխստակէսից»  
յետոյ նրանք ներկայացրին «Վայ» իմ կո-  
րած յիսուն ոսկի» զօդը կլը, որ գրել էր  
ուսանող Ալագաթեանը և որի Նիւթը վեր-  
ցրած էր Թիֆլիսի ժամանակակից կեան-  
քիո»:

Նոյն կարծիքը լէօն տարբեր ձեւով արձանագրում է նաև իր «Ալեքսանդր Նազարեանց» գրքում (էջ 76, հատոր երկրորդ 1902թ.): Այդ վարիանտում նա գրում է

— «1859թ. յունվարին Աօսվկայի հայուսանողները մի ներկայացում տիին։ Դա հայկական առաջին ներկայացումն էր Ռուսաստանում։ Ներկայացումը տեղի ունեցած մի մասնաւոր տան մէջ, բայց ընդհանրապէս յաւ տապաւորութիւն թողեց»։

Քանի տեսակ կարծիք է յայտնում  
Լէօն։ Նրա վարիանտներից ո՞ր մէկն ըն-  
դունիլ ուստահայ թատերազրութեան եռ-  
թատրոնի ծագման աղբիւր։ Դժւար է,

շատ դժւար, որոշ եզրակացութեան յան-  
գել, որովհետեւ տիրող հակասական մըտ-  
քերն ու փաստերը հնարաւորութիւն չեն  
տալիս դուրս գալու ստեղծւած քաօսից։  
Եւ դուք աւելի էք ընկզմում այդ քաօսի  
մէջ, երբ կարդում էք Լէօի հինգերորդ  
տեսակէտր.

— «Նոյն 1859 թւականին Թիֆլիսում կան ոչ միայն հայերէն ներկայացումներ, այլ և ինքնուրոյն թատերագրութիւն («Ռուսահայ գրականութիւնը», էջ 107)»:

Այսպէս՝ հայ թատրոնի եւ թատերա-  
գրութեան սկզբնաւորութեան մասին Լէօն  
իր գրքում. արձանագրում է չորս տարրեր  
տեսակներ՝ մասնաւոր թիւ՝ 22

ական բռականենքի վերջին գրում և առ-  
սպահայերի ասացին ինքնուրոյն բատրունական  
երկը... և նա ներկայացրում է նոյնիսկ  
Շերմազանեանի տաեր», մի այլ տեղ թէ  
«Դարձեալ հայ ուսանողներն եին, որ հայ-  
կական բատրունի հիմքը դրին Ծորսատանի  
հայերի մեջ», մի ուրիշ տեղ թէ «Այսող  
էլ ասաչին խօսքը պատկանում է Միհրա-  
րեան հայրերին» և այլն։ Ո՞րն է, վեր-  
ջապէս, այդ իրար հակասող չորս կար-  
ծիքից ճիշտը, ընդունելին, պարզ չէ։  
Պարզ է միայն մի հանգամանք, որ Լէօն  
իր արձանազրած տարրեր վարդիանեն-  
բով աւելի եւս մթագնել է և աղաւաղել  
ուուսահայ թատրոնի պատմութեան առա-  
ջին շրջանը։

Սակայն թողնենք լէօի տարօրինակ հաւասարութիւնները, հայ թատրոնի պատմութեան համար արժէք չունեցող նրա սխալ տեսակէտներն ու մեկնարանութիւնները և բննենք միւս պատմագիրների աղբիւրները:

ԵՐԵՈՐԴ ՏԵՍԱԿԵՏ

Ի՞նչ եմ արծաթազրում գոօշեամը, ֆափազեամը  
և լրամնէիեամը

Թատրոնական պատգամագիրների մի  
խմբակ էլ կայ, որը կանգնած է բոլորու-  
վին տարբեր գծի եւ տեսակէտի վրայ :  
Պերճ Պոօշեան, Վրթանէս Փափազեան և  
Լեռն Մանւէլեան երրորդութիւնն է դա :

ի՞նչ են ասում գրական այդ հեղինակները, ո՞ր ժամանակաշրջանը, ո՞ր թիւն են համարում նրանք ոռուսահայ թատրոնի և թատերագրութեան սկիզբը:

Երեք թատերագիրների եզրակացութիւնն էլ մի է, երեքն էլ ընդգծում են և շեշտում, որ ոռուսահայ թատրոնն սկիզբ է առել 50-ական թականների վերջերին, 1859 թւին: Երեքն էլ ժխտում են 1858 թիւը: Թւական տւեալի տեսակէտից նըրաւանք կանգնած են համարեա նոյն գծի վրայ, բայց թէ ուր է ներկայացւել առաջին պիէսը, ո՞ր բաղաբում և ո՞ր պիէսը, այս հարցերը լուսաբանելիս նրանք բաժանում են իրարից: Այս վերջին հարցում վրթանէս ֆափազեանը եւ Լեւոն Մանւէլեանը նոյնութեամբ կրկնում են Լէօի հակասութիւնը, իսկ Պերճ Պոօշեանը տալիս է նոր լուսաբանութիւն:

Պոօշեանի վարիանար: 1893 թւի «Թատրոն» գրական և թատերական հանդիսի (թ. 1, Ա. տարի, էջ 35) մէջ «Հայոց թատրոնի սկզբանը աշուշառորդիւնը թիֆլիսում» խորագրով յօդուածում ազգագիր-վիպագիր Պոօշեանն այսպէս է նկարագրում թիֆլիսի հայ թատրոնի հիմնագրութեան պատմութիւնը.

— «Թիֆլիսում հայոց թատրոնը ու դասարանով մէծ ընկերութիւն:

Զը գիտեմ՝ ո՞ր տեղից էին ձեռք բերել «Մեծն Ներսէս» ողբերգութիւնը. հաւանական է, որ դարձեալ Միսաքը բերած լինէր իւր հետ Տաճկաստանից»:

Ի՞նչ ենք եզրակացնում Պոօշեանի այս վարիանուց: Այս, որ տաճկահայ մի պատահի, Միսաք Արամեանցը, թիֆլիսում դնում է ոռուսահայ թատրոնի հիմքը: Որ ոռուսահայ թատրոնն սկիզբ է առնում ոչ թէ Մոսկայում, այլ Թիֆլիսում, այն էլ թրբահայ մի պիէսով:

Այդպէս է, սակայն, պատկերը: Արգեօք 1859 թւին Թիֆլիսում է արւել ոռուսահայ առաջին ներկայացումը: Արգեօք այդ թւից առաջ չեն կազմակերպւել ներկայացումներ:

Նշենք նախ, որ Պոօշեանն իր տեսակէտը, իր փաստացի տեսալները ժխտում և հերքում է ամենից առաջ հէնց ինքը: Լաւ ուշագրութիւն դարձրէք հետեւեալ տողերին:

— «Թիֆլիսում հայոց թատրոնի սկիզբը գրւեց 50-ական թականների վերջերին»:

Երկու տող ցած նա գրում է.

— «Անժմանի է, որ այս և այն անկիւններում երկու, երեք մանկական փորձեր եղել էին»:

Ի՞նչ է ասում երկրորդ փաստը: Այն, որ պատահի Միսաք Արամեանի կազմակերպած ներկայացումից առաջ Թիֆլիսի պեկավար և կարգադրիչ: Սխալւած չենք լինիլ ասելով՝ որ մի մանուկ էր սկզբնապատճառը և կառավարողը: Գերերջանիկ Մաթէսո կաթողիկոսը կ. Պօլսից բերել էր հետը մի երեխայ և տւել Ներսիսեան դպրոցը:

Այդ փոքրիկը, երեւի, տեսել էր իւր հայրենիքում հայ ներկայացումն և համոզեց իւր ընկերակիցներին նոյնպիսի մի խաղով էլ այսեել զւարձանալ:

Դեռահաս, մօտ 14 տարեկան ճարպիկ, Միսաք Արամեանցն էր նա . . . սիրելի էր տեսնել, թէ ի՞նչպէս կրակի կտոր մանուկ Միսաքը՝ հոսհոսական թեթեւութեամբ՝ ա-

Փափազեան: 1910 թւին հրապարակ է

գալիս Վրթանէս ֆափազեանը և կրկնում նոյն սխալը: Նա իր «Պատմութիւն հայոց գրականութեան» գրքում (էջ 435 - 6) գրում է.

— «Որուսահայերի մէջ առաջին հայերէն ներկայացումը կազմւեց Մոսկա, 1859 թւականի յունար 27-ին . . . ներկայացումը տեղի ունեցաւ մի մասնաւոր տան մէջ եւ հանդիսաւուներն էին երկու հարիւրի չափ մարդիկ և կանայք... Այդ առաջին ներկայացմանը դրւած էին երկու պիէսներ: Առաջինն էր Ա. Վանանդեցու «Արխտակէս» կոչուած պիէսը, որի նիւթը Արշակ Բ.-ի որդի՝ Պապի կեանքն էր և ներսէս Մեծի մահը:

... 1859 թւականին, Մոսկայում տեղի ունեցած հայերէն ներկայացման ժամանակ, բեմ հանւեց նաեւ մի ինքնուրոյն բաւական յաջող կենցաղական պիէս... Այդ վօդէւիլլ կոչումը էր «Վայ իմ կորած 50 ոսկին»: Հեղինակն էր Ալաղաթեան: Նիւթը վերցրած էր Թիֆլիսի կեանքից»:

Այս արձանագրութեան մէջ էլ, բացի կրկնութիւնից, չկայ նորութիւն, նոր լուսաբանութիւն: Այնտեղ պարզապէս կըրկնւած են Միք. Նալբանդեանի 1859 թւին «Հիւսիսափայլ» -ում գրած ոչեցնզիայի տւեալները, որով չի դիմանում որևէ բընազատութեան:

Մանեկեան: Ուզիղ երկու տարի անց, 1913 թւին, Լէօի, Փափազեանի նոյն աղբիւրը կրկնում է նաեւ գրական պատմագիր և բանաստեղծ Լեւոն Մանւէլեանի իր «Պոօշեանայ գրականուրեան պատմութիւն» գրքում (էջ 106-107):

— «Առաջին ներկայացումը տեղի ունեցաւ Մոսկայում 1859 թ. յունարի 27-ին: Ներկայացումը կազմակերպւել էին ուսանողները, որոնք ընտրել էին Ա. Վանանդեցու «Արխտակէս» պատմական ողբերգութիւնը և ուսանող Ալաղաթեանի կատակերգութիւնը թիֆլիսի կեանքից «Վայ իմ կորած 50 ոսկի» վերնագրով»:

Այս վարիանտը եւս իր ամբողջութեամբ կրկնութիւն է, որով արժանի չէ առանձին ուշագրութեան:

Ո՞րն է լեւոն բաբայեամի կարծիքը

Կանգ առնենք, վերջապէս, պատմական ամենավերջին փաստաթղթի վրայ: Դա ոռուսահայ թատրոնի պատմութեան շըլթայի օղակներից մէկն է, որն առանձնայատուկ նշանակութիւն ունի հէնց նրանով, որ հայ հասարակութիւնը հիմք ունենալով այդ վաւերագիրը, 1908 թւին Թիֆլիսում, տօնում է Ռուսահայ բատրունի յիսեամեակը: Լեւոն Բաբայեանի «Ռուսահայ բատրունի յիսեամեակը» խորագրով գեկուցման է դա, որը կարդացել է նա Թիֆլիսում, 1908 թ. Յունարի 28-ին, ոռուսահայ թատրոնի 50-ամեայ յօրելեանական տարեղարձին տրւած ներկայացման օրը:

Ո՞րն է Բաբայեանի տեսակէտը, ո՞ր ժամանակաշրջանն է ընդունում նա ոռուսահայ թատրոնի և դրամայի ծագման հիմքը:

Բաբայեանը բացարձակապէս ժխտում է Մարկոս Աղաբէկեանի նշան 1836 թիւը, ինչպէս և Պերճ Պոօշեանի, Լէօի, Վրթանէս Փափազեանի և Լեւոն Մանւէլեանի ընդունած 1859 թւականը: Իր զեկուցման սկզբում նա մի երկար յառաջաբանով թատրոնի նշանակութիւնն ու դերը պարզելուց յետոյ, կտրուկ կերպով յայտարարում է, որ ոռուսահայերի առաջին ներկայացումը կազմակերպւել է ոչ 1836 և ոչ էլ 1859 թւին, այլ 1858 թ. Յունարի 29-ին Մոսկայում: Նրա զեկուցումը, որ «1858-1908» խորագրով տպւել է նախ՝ «Հայոց դրամատիկական ընկերութիւնը պատմութիւն» գրքում (էջ 106-107):

— «... Մոսկայի ուսանողութիւնը չէր կարող անտես անել հայկական մայրենի թատրոնի գաղափարը, որ կուլտուրական ահազին հեղինակութիւն և ժողովրդական ուղղութիւնը մէջ (Թիֆլիս, 1908, էջ 104) «Ռուսահայ բատրունի յիսեամեակը» վերնագրով, այսպէս է ընդգույնում:

— «... Մոսկայի ուսանողութիւնը չէր

կարող անտես անել հայկական մայրենի

թատրոնի գաղափարը, որ կուլտուրական

ահազին հեղինակութիւն և ժողովրդական

ուղղութիւնը մէջ (Թիֆլիս, 1908, էջ 104) «Ռուսահայ բատրունի յիսեամեակը» վերնագրով, այսպէս է ընդգույնում:

դաքակրթւած ազգերի մէջ և կուլտուրական ու կրթական մեծ դեր պէտք է կատարէր ոռուսահայերի վերածնութեան և յառաջադիմութեան համար:

...Այդ ինտելիգէնցիան էր, որ հայկական թատրոնի հիմքը դրեց ոռուսահայերի մէջ: 1858 թ. Յունարի 28-ին, Պոսկայի մի խումբ ուսանողներ կազմակերպէցին ոռուսահայկան առաջին ներկայացումը մի մասնաւոր տան մէջ և ներկայացրին Յովհաննէս Գուրգէնքանի «Հաջի-Սուլէյման» վերնագրով մէկ գործողութեամբ վօդէւիլը»:

Թէ ինչ է այդ պիէսի բովանդակութիւնը, կեանքի ո՞ւ ժամանակաշրջանին է վերաբերում, հասարակական ո՞ր խաւի կեանցն է պատկերացնում, այս կարեւոր հարցերի մասին լուսմ է Բարայեանը: Դեռ աւելին: «Հաջի-Սուլէյման»-ի մասին նա չի արձանագրում ուրոյն տեսակէտ. իր տեղեկութիւնները վերցրել է նա պատմաբան Ա. Երիցեանի պատմութիւնից: Բարայեանի եզրակացութիւնը միայն այս է, որ «Եւրօպական թատերական գրւածը թարգմանութիւնները մեզանում սկրւում են 19-րդ դարի երեսունական թըւականներին, սակայն հայկական բնմի հիմք է դրւում միայն 1858 թւին»: Այդ է հաստատում, սակայն, պատմական փաստը: «Հաջի-Սուլէյման»-ով է ըսկրւում ոռուսահայ թատրոնը և դրաման: Այս հարցին պատասխանում է հէնց ինքը, Բարայեանը, հերքելով իր առաջին վարիանտը: Նոյն յօդւածում նա ժխտում է իր պաշտպանած տեսակէտն՝ արձանագրելով այս տողերը.

— «Իսկ 30-ական թւականների վերջում Գալուստ Շերմազանեանը գրում է ոռուսահայերի առաջին ինքնուրոյն թատրոնական գործը, որ ներկայացնում է հէնց հեղինակի տանը»:

Կարիք կայ Բարայեանի հակասութիւններն առնելու առանձին շրջանակի մէջ: 30-ական, թէ 50-ական թւական, Բարայեանն ինքն էլ չի կարողացնալու հաստական համար: Կարիք կայ Բարեմագը լուսական մասին:

Ա. Երիցեանի և Բարայեանի արձանագրած 1858 թւականն ընդունիլ ոռուսահայ թատրոնի սկզբնաւորութեան հիմք: Լարո՞ղ ենք Յովհաննէս Գուրգէնքանին համարել ոռուսահայ թատերական գրականութեան հիմնադիրը: Արձանագրել այդամասը է աղաւաղել թատրոնին կուլտուրական գործոններից մէջը, որ հայ ժողովրդի կուլտուրական զարգացման շրջանում ահազին դեր է կատարել: Անվիճելի է այն փաստը, որ հայերի կուլտուրական հիմնարկութիւններից գրեթէ առաջին տեղն է գրաւում թատրոնը, որի նպատակն է եղել միշտ ծառայել մեր ժողովրդի լայն խաւերի կուլտուրական կատարելութեան բարձր գաղափարին, բարձրացնել այդ խաւերի բարոյական մակերեւոյթը, պատաստելով նրանց մէջ հասարակական մօրալի սկզբունքները:

35-ԱՄԵԱԿ, 50-ԱՄԵԱԿ,  
Թիվ ԹիւրիՄԱՑՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի թատերասէր հայ հասարակութիւնը հիմնւելով Լեւոն Բարայեանի արձանագրած վաւերագրի վրայ՝ կատարում է պատմական մի սխալ: Ուղիղ երեսունութը տարի առաջ, 1893 թւի Յունարի 28-ին, հինգշաբթի օրը, Թիֆլիսի հայոց դերասանական մշտական խմբի անդամները և թատերասէրները հաւաքրում են Թիֆլիսի Արքունական թատրոնում եւ տօնում ոռուսահայ բեմի 35-ամեակը: Այդ է հաստատում, սակայն, պատմական փաստը: «Հաջի-Սուլէյման»-ով է ըսկրւում ոռուսահայ թատրոնը և դրաման: Այս հարցին պատասխանում է հէնց ինքը, Բարայեանը, հերքելով իր առաջին վարիանտը: Նոյն յօդւածում նա ժխտում է իր պաշտպանած տեսակէտն՝ արձանագրելով այս տողերը:

— «Իսկ 30-ական թւականների վերջում Գալուստ Շերմազանեանը գրում է ոռուսահայերի առաջին ինքնուրոյն թատրոն ունական գործը, որ ներկայացնում է հէնց ինքինակի տանը»:

Այդ տօները, ի հարկ է, կուլտուրական մեծ նշանակութիւն ունեցող ցոյցեր են ոռուսահայերի գեղարեւեստական վերելքի պատմութեան մէջ: Այդ տօներն այսօր գաղափար են տալիս մեզ ժամանակաշրջանի թատերասէր հասարակութեան կուլտուրական մակարդակի, նրա գեղարւեստական հասկացողութեան և հայեցքապէս ընդգծել: Կարո՞ղ ենք, ուրեմն,

Թատրոնի 50-ամեայ տօնի առթիւ տրւած զեկուցումն այդ հասարակութեան հայեցքների մի ամփոփ պատկերն է: Ահա թէ ինչպէս է պատկերացնում այդ ժողովուրդը թատրոնի դերն ունշանակութիւնը:

— «Գրականութեան, դպրոցի և հասարակական ուրիշ հիմնարկութիւնների նման թատրոնն էլ կազմում է այն խոչը հասարակական-կրթական գործոններից մէջը, որ հայ ժողովրդի կուլտուրական զարգացման շրջանում ահազին դեր է կատարել: Անվիճելի է այն փաստը, որ հայերի կուլտուրական-կրթական հիմնարկութիւններից գրեթէ առաջին տեղն է գրաւում թատրոնը, որի նպատակն է եղել միշտ ծառայել մեր ժողովրդի լայն խաւերի կուլտուրական կատարելութեան բարձր գաղափարին, բարձրացնել այդ խաւերի բարոյական մակերեւոյթը, պատաստելով նրանց մէջ հասարակական մօրալի սկզբունքները:

Հայ թատրոնն է եղել այն հիմնարկութիւնը, որի չնորիւ մենք ծանօթացել ենք ինչպէս օտար, այնպէս էլ մեր ազգի կեանքի դրական և բացասական բազմազան կողմերի և երեւոյթների հետ: Հայկական թատրուական բեմի վրայ են բարձրացել եւ լուծել այդ ազգերի ընտանեկան, բարոյական և սօցիալական կեանքին վերաբերող բազմապիսի հարցեր և դրանով նպաստել հասկանալու և գիտակցելու մեզ շրջապատող իրականութիւնը, առանց որի անհասկանալի կը լինէր հասարակական գործունէութիւնը եւ մեր կեանքի բացասական երեւոյթների դէմ մղած ծանր կիւիւը:

Վերջապէս հայկական թատրոնն է եղել ճշմարտութեան այն տաճարը, որտեղից հայ ժողովրդը լսել է ճշմարտութեան բարձր գաղափարները և արտայայտէը մեր ձըգտումների, պահանջների, կարիքների եւ յոյսերի»:

Որուսահայ թատրոնի 50-ամեայ տօնին արտասանւած առաջին այս խօսքերը ցոյց են տաւ լիս, որ հայ հասարակութեան տարբեր խաւերը ոչ միայն բմբնում են և հասկանում թատրոնի դերը, նշանակութիւնը է առանց իշխող սոսկ ենթադրութիւնը է նրանց համար կուլտուրական պահանջ:

Գ) Երիցովն իր ձեռքի տակ չունենալով պատմական ճիշճանին էլ լաւ ծանօթ չլինելով հայ թատրոնի դերը և այն, որ թատրոնը դառնում է նրանց համար կուլտուրական պահանջ:

Ահա այդտեղ էլ կայանում է ոռուսահայ թատրոնի 35-ամեայ եւ 50-ամեայ տօների պատմական-կուլտուրական նշանակութիւնը:

ԽՆՉ ԵԽԲ ԵԶՐԱԿՑՈՒՄՈՒՄ

Այժմ մեզ համար էականը և կարեւուրը թատերագիրների արծարծած կարծիքներն ու դատողութիւններն են: Ի՞նչ ենք եզրակացնում նրանց արձանագրած փաստաթղթերից եւ տւեալներից: Այն, որ ամբողջ 50 տարի, ամբողջ կէս դար թատրոնական պատմագիրները - Պերճ Պուշտէան Մանւէլեանը, Լէոն, Վլր. Փափազեանը, Լէոն Մանւէլեանը, Ալէքսանդր Երիցեանը, Լէոն Բարայեանը և ուրիշները - ուռուսական պատմագիրները - Պերճ Պուշտէանը, Լէոն Մանւէլեանը, Ալէքսանդր Երիցեանը, Լէոն Բարայեանը և ուրիշները - ուռուսահայ թատրոնի կարծիքների անունները:

Հայ թատրոնն է եղել այն հիմնարկութիւնը, որի չնորիւ մենք ծանօթացել ենք ինչպէս օտար, այնպէս էլ մեր ազգի կանոնների մէջ: Ահա թէ ինչո՞ւ գրական-թատերական այդ հեղինակների տեսակէտներն ու փաստարդիքները իշխող կարծիքները ու կարծիքները:

Այստեղ սրբագրենք, ուրեմն, ոռուսահայ թատրոնի կրամայի սկզբնաւորութեան մասին մինչեւ օրս իշխող սիալ և թիւր տեսակէտներն ու կարծիքները:

Ա) Ա. Ռոյերի հայ թատրոնի պատմութեան նիւրած յօդւածն առաջին մի արժէք չի ներկայացնում, որովհետեւ առաջին կրկնութիւն է. Երկրորդ՝ չի հիմնած պատմական փաստացի տւեալների վրայ եւ երրորդ՝ զարդարւած է պատմական և թւեական սխալ տեղեկութիւններով:

Բ) Ա. Ռոյերի հայ թատրոնի պատմութեան նիւրած յօդւածն առաջին մի արժէք չի ներկայացնում, որովհետեւ առաջին կրկնութիւն է. Երկրորդ՝ չի հիմնած պատմական փաստացի տւեալների վրայ եւ երրորդ՝ զարդարւած է պատմական և թւեական սխալ տեղեկութիւններով:

Ը) Երիցովն իր ձեռքի տակ չունենալով պատմական ճիշճանին էլ լաւ ծանօթ չլինելով հայ թատրոնի դերը և այն, որ թատրոնը դառնում է նրանց համար կուլտուրական պահանջների իշխող սոսկ ենթադրութիւնն է որով չի դիմանում որևէ քննադատութեան:

պատմութեանը , ոչ միայն աղաւաղել է  
ճիշտ փաստերն ու տւեալնելը , այլ եւ  
արձանագրել միանգամայն սխալ , անճիշտ  
տեղեկութիւններ :

Դ) Մարկոս Աղաբեկինանի կարծիքը չի կարող հայ թատրոնի ծագման և դրամայի սկզբնաւորութեան հիմք ծառայել, որովհետեւ հիմնած է, ինչպէս ինքն է խոստապահութեան մասին պատճենը:

ե) Լեօի այն տեսակէսը, թէ ոռւսա-  
հայ առաջին պիէսը գրւել է և ներկայա-  
ցւել 1836 թւին Թիֆլիսում, սիսալ է և  
հիմք չունի, որովհետեւ հրապարակի կայ  
36 թւականից էլ վաղ գրւած պիէս։ Նրա  
միւս տեսակէտներն իրար ժխտող և հա-

կասող վաւերագրեր են, այդ պատճառով  
էլ առանձին արժէք ու նշանակութիւն չեն  
ներկայացնում և չեն դիմանում քննադա-  
տութեան:

9.) Պերձ Պոօչեանի տեսակէտը, թէ թիփ-  
խոռում հայոց թատրոնի սկիզբը դրւեց 50-  
ական թւականների վերջերին, ոչ միայն  
անհիմն է, այլ և քննադատութեան հա-  
մար ընդունելի չէ, որովհետեւ 1859 թւ-  
ից շատ առաջ թիփլիսում տրւել են  
երկայացումներ :

Ե) Վր. Փափազեանի և Լ. Մանեկեանի  
ճռական եւ կարուկ այն յայտաբարու-  
թինները, թէ առաջին ներկայացումը  
եղի է ունեցել Մոսկվայում, 1859 թը-  
ին, չի կարող ոռւսահայ թատրոնի ծագ-  
ան հիմք ծառայել, քանի որ դեռ 20-  
մական թւականներին թիֆլիսում, Ներսի-  
եան ուսումնարանում, կազմակերպւել են  
երկայացումներ :

Ը) Նոյն հիմունքներով և տևալներով  
և հերթում է նաեւ լեռն թարայեանի  
եսակէտը:

## Ի՞նչ են ԱՍՈՒՄ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐ ՓԱՍՏԵՐԸ

Եթէ տըամաբանսական ճիշտ վերլու-  
ծութիւնը և պատմական տւեալները հեր-  
քում են թատրագիրներ՝ Ա. Ռոյերի,  
Անսելովսկով, Լուիցովի, Աղարէկեանի,  
Պոչեանի, Լէօի, Փափազեանի, Մանէ-

լեանի և Բաբայեանի տեսակէտները, ապա  
ո՞րն է ռուսահայերի առաջին պիէսը եւ  
ո՞ր ժամանակաշրջանը, ո՞ր թւականը պիտի  
համարել ռուսահաւ թատրոնի ծագման

սկիզբը: Արդեօք ՅՈ-ական թւականներին  
և դրանից առաջ չե՞ն եղել ներկայացում-  
ներ, չե՞ն գրւել պիհներ, չի՞ եղել թա-  
տընական շարժում:

Նոր ուսումնասիրութիւնները, բանասիրական յամառ հետազօտութիւնները եւ փաստացի տեեալները նոր լոյս են սրբում ուսահայ թատրոնի ծագման եւ դրամայի սկզբնաւորութեան մասին եւ բեկում առաջ բերում ուսահայ թատրոնի պատմութեան մէջ :

Առաջին փաստարուղրը: Դրական հրապարակի վրայ ունինք խիստ արժէքաւոր երկու զօկումէնտ: Դրանից առաջինը Յարութիւն Ալամդարեանի «Հրամիզը և Զե-

նորիս» ողբերգութիւնն է, որի շապիկը  
դրսեւորում է հետեւեալ պատկերը.

# ՀՐԱՄԻՋԴՐ

## ԵՒ ԶԵՆՈԲԻԱ

## Այսատասիրութեամբ

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

## ԱՀԱՄԴԱՐԵԱՆՑ

Այս պիէսի տպագիր մի օրինակը գտնը-  
ում է մարզսիստ քննադատ Ա. Մելիքեանի  
հօտ, իսկ ձեռագիր մի վարիանուը պահ-  
ած է Ե. Սուրէնու (Սուրէն Երզնկեանի)

նստանեկան արխիվում : Ժողովրդական լեռասան խաչակը Ալիխանեանը յայտնեց մեզ, որ յիշեալ պիհսի տպագիր մի օրինակը տեսել է 1892 թւին Թիֆլիսի Ներսիսեան գպրոցի հին շինութեան գրադառնում :

Թէս առաջին անգամ ո՞ր թւականին է ներկայացւել այդ պիէսը, ո՞ր բեմի վրայ, առ այժմ յայտնի չէ։ Այսբանը միայն պարզ է, որ պիէսը գրւել է 1820 թւականների վերջերին եւ ՅՈՒՆԻՏԵՐԻ պահանջմանը հաջող է։

ի՞նչ կուան ունինք թւական այդ տևեալը  
հաստատող : Պիէսի հեղինակ Ալամդարեանը  
վախճանեւել է Նոր - Նախիջեւանի Խաչ  
վանքում 1834 թւականի Մայիսի 25-ին ,  
ուրեմն նա իր պիէսը գրած պէտք է լինի  
1828 թւից յետոյ , որովհետեւ պիէսի շապ-  
կի վրայ նշում է . « Յարութիւն վարդա-  
պետ » : 1828 թւին էր , որ Ներսէս արք-  
եպ . ձեռնազրեց նրան վարդապետ , իսկ  
1830 թւին նա հեռացաւ թիֆլիսից : Այդ  
թւից յետոյ էլ սկսեցին նրա թշուառու-  
թեան օրերը :

Փաստ է, ուրեմն, որ ՅՈ-ական թւականներից առաջ ունեցել ենք զբամա: Այս մօմէնտը բաւական ճիշտ կերպով վերլուծում է Ե. Սուրէնին իր «Ծուահայ բնիփեղ դրամատուրգիայի արմատները» («Հայարձուուն» 1925, թիւ 1, Բագու) յօդւածումը:

— « Որ ոռուահայ իբականութեան մէջ  
և այն էլ ոչ-գաղութային կենտրոնում մենք  
1859 թւականից առաջ և յետոյ ունեցել  
ենք ձեռագիր բաւական զարգացած թա-  
տրոնական գլականութիւն (տպագրական  
հնարաւորութիւնները 19-րդ դարու առա-  
ջին կէսին շատ սահմանափակ էին), մեզ  
ասում է այն փաստը, որ 1830-35 թւա-  
կանների թատրոնական գործերով շատ հե-  
տաքրքրում են այն ժամանակի առաջաւոր  
գործիչներ, ինչպէս օրինակ Յարութիւն  
Ալամդարեան - Ներսիսեան դպրոցի առա-  
ջին տեսուչը, Գալուստ Շերմազանեանը -  
Թատրոնական հեղինակ և Թիֆլիսի քաղա-  
քագլուխ յետագայում, Գուրգէնբէկեան Ա-  
բել - արևստի զարգացումի նախանձական-

դիր երիտասարդ և անշուշտ ուրիշները, որոնք վրիպել են մեր պատմագիրների աշ-քից։ Ավամղարեան Յարութիւնը – իր ժա-մանակին այդ խսկապէս նշանաւոր դէմքը գրական, վարչական, մանկավարժական ասպարզէններում և մէկը՝ յայտնի ինտրի-գան ճերսէս Աշտարակցու զոհերից – թողել է նոյնիսկ մի պիէս-ձեռագիր։ Այսպէս մեր պնդումը, թէ արդէն երեսնական բշական-ներին վահական-ուսանողական հետաքրք-քրութիւնից շատ առաջ, արդէն բեմական խնդիրները օտարութի չէին Անդրկովկասի կենտրոնի հայ հասարակութեան կեանքին, սուսկ հնթագրութիւնն չէ։

Այստեղ սրբագրենք Ե. Սուրէնի այն  
յայտարարութիւնը, թէ Յարութիւն Ալամ-  
դարեանի ձեռագիր պիէսը, որ յայտնա-  
բերել է իր ընտանեկան արխիվց, առաջին  
անգամ լինելով յանձնում է գրականու-  
թեան պատմութեանը։ Այնպիսի տպաւո-  
րութիւն է ստացւում, որ յիշեալ ձեռա-  
գիրը մինչեւ օրս էլ չի հրատարակւած։  
Բայց փաստն այն է, որ նախ Ե. Սուրէնի  
մօտ գտնւած ձեռագիրը՝ պիէսի մի վա-  
րիանտն է և երկրորդ՝ այդ պիէսը ձեռա-  
գիր չէ, այլ վաղուց է տպագրւած։

Այժմ հիմնականն այդ պիէսի նոր լուսաբանութիւնն է, որ վրիպել է հայ թատրոնի պատմագիրների աչքից : Ի՞նչ է ասում պատմական այդ պիէսը, ինչումն է կայանում զրա արժէցը : Այդ ողբերգութիւնը միանգամայն հերլցում է մինչեւ օրս տիրող այն կտրուկ կարծիքը, թէ ոռւսահայ թատրոնը և թատրոնական գերականութիւնն սկիզբ են առել 1836 թւին թիֆլիսում, կամ՝ 1858-59 թւականներին Մոսկուայում: Միանգամայն բացասում է և սրբազրում Մարկոս Աղարէկեանի, Պերճ Պոօշեանի, Լէօփ, Վր. Փափազեանի, և Մանէլեանի թարայեանի արձանագրել են ոռւսահայ թատրոնի եղբակացութիւններն ու տեսակէտաները, որ նրանց արձանագրել են ոռւսահայ թատրոնի եւ

դրամատուրգիայի ծագման սարին։  
Կարելի՞ է, սակայն, Ալամզարեանի  
«Հրամիզգ և Զենորիա» պիեսը համարել  
ոռւսական եռի թատերական առաջին ինք-

նուրոյն երկը: Արդեօ՛ք զբանից առաջ չի լին են ասում պատմական այս վազաբել զբամա: Անել վճռական եզրակացութիւն, նշանակում է մի նոր սխալ գործել: Որ 30-ական թւականներից էլ շատ առաջ ունեցել ենք զբամա, բեմական ներկայացումներ, ոչ մի կամկած չի կարող լինել: Անժխտելի է, որ ժամանակի առաջաւոր, կուլտուրական գործիչները – Ալամդարեան, Գուրգէնբէկեան Արէլ, Շերմագանեան Գալուստ – չնախաձեռնէին գեղարւեստական այդ գործը, անկարելի է, որ նրանք անտես առնէին թատրոնի գաղափարը, որ մեծ ժողովրդականութիւն էր վայելում ժամանակի քաղաքակիրթ ժողովուրդների մէջ և կուլտուրական ու կրթական նշանակալից դեր կատարում նրանց առաջադիմութեան ու վերածնութեան գործում:

Երկրորդ վիաստարուղրը: Թատրոնական հին գործիչ՝ Միքայէլ Պատկանեանի արխիտում գտանք մի ձեռագիր, որից պարզում է, որ 1824-28 թւականը Ներսիսեան դպրոցի դահլիճում կազմակերպուել են ներկայացումներ: Այդ ձեռագրում զբանական է:

— «Էս ՑՈՒՑԱԿԸ ՑՈՅՑ է ՏԱԼԻ ԷՆ ԱՆՁԱՆՑ, ՈՐՈՆՔ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՇԿՈԼԻ ԹՀԱՏՐՈՆԱԿԱՆ ԲԵՄԻ ՎՐԱՅ ԼՈՒՍԱՀՈԳԻ ԱԼԱՄԴԱՐԵԱՆԻ ՕՐՈՓ ԽԱՂԱՅԵԼ ԵՆ ՀԱՏԻՄՆԵՐ: ԱՀԱ. ԷԴ ՊԱՏԻՍԿԱՆ ԱՆՁԻՆՔԸ – ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՆԵԱՆ ՍԱՀԱՌՈՒՆԻ, ԳՐԻԳՈՐ ՑՈՎՈՒՖԵԱՆ, ԳՐԻԳՈՐ ՄԵԼԻՔԵԱՆ, ԳԱԲՐԻԵԼ, ՄԻՐԶՕՅԵԱՆՅ, ԳԱՅՐԵՒՄ ՇԵՐՄԱՉԱՆԵԱՆՑ ԵԻ ԱՅԼԻ»:

(Ժարումակելի)

Արամ Երեմեան

ի՞նչ են ասում պատմական այս վազաբել երազերը: Այն, որ դեռ 20-ական թւականներին ունեցել ենք թէ զբամա եւ թէ թատրոն: Եւ դա շատ բնական երեսոյթ է: Ունեցել ենք 20-ական թւականներին հասարակական – տնտեսական կեանք, քաղաքացան ապրումներ: Այսո՛: Միթէ կարո՞ղ էին ժամանակաշրջանի կուլտուրական – զբական դէմքերն անտարբեր մնալ այդ երեսոյթների հանդէպ, կարո՞ղ էին նրանք չարձանազերել պատմաշրջանի յուզող, հրատապ խնդիրները: Երբէ՛ք: Թերեւս շատերն առարկեն, թէ ուսանողական ներկայացումները չենք կարող ուսասհայ թատրոնի սկիզբը համարել: Ներկայացումների ուսանողական բնոյրի մասին առարկութիւն չի կարող լինել, որովհետեւ 1858 և 1859 թւականներին Մոսկայում եւս ներկայացումները տըրում են ուսանողական նախաձեռնութեամբ: Եթէ ընդունում ենք 1858 և 59 թւականներին Մոսկայի ուսանողական բնագրութիւնները, ապա ինչո՞ւ չընդունինք 1824-28 թւականներին թիֆլուսում տըրուած ներկայացումները:

Ժամանակը եւ մանրակրկիտ հետազոտութիւնները, ինչպէս և փոշիների տակից դուրս բերւած նոր ձեռագիր պիէսներն ու ափիշները դեռ շատ մութ էջեր կը լուսաբանեն ուսասհայ թատրոնի եւ զբամայի սկզբնական շրջանի պատմութեան մասին: Անհրաժեշտ է միայն այդ ուղղութեամբ յամառ պեղումներ կատարել:

## ԿՈՐՍՈՒԵԼՈՒ ԵՆԹԱԿԱՅ ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹԵՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

։

ՀՐԱՄԱՆԱԳԻՐՆԵՐ ԵՒ ՏՈՒՐՔԵՐՈՒ ԳԱՆՁՈՒՄ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

ՕՍՄԱՆԵԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒԻՆ

ԺԵ Պարէն սկսեալ մինչեւ ժթ Պարուսկիզրները և քիչ մ'ալ աւելի ետքերը, Օսմանեան տիրապետութեան տակ գլունը հպատակ ժողովուրդները կարգ մը թոյլտուութիւններու համար պարտաւոր էին անհրաժեշտ կերպով մասնաւոր, որոշ արտօնագիր ստանալ: Զոր օրինակ՝ ձի նստիլը քաղաքներու մէջ – ձգենք զիւղերը – իսլամ բնակչութեան միայն թոյլտրուած էր. ոչ-իսլամները ստիպուած էին յատուկ հրամանազիր ձեռք բերել: Նոյնպէս՝ գլխանոցները, հագուստներու կերպասները և ձեւերը մասնաւոր օրէնքներու ենթակայ էին:

Այս մասին կառավարական այլեւայլ պաշտօնական զրութիւններ ունինք մեր ձեռքը՝ որոնց մէկ քանիներուն թարգմանաբար հրատարակուիլը յարմար պարագային՝ օգտակար կը դատենք:

Կը սկսինք ուրեմն այս անգամ ձի նստելու համար տրուած պաշտօնական «թէզբէրէ»ի (permis) մը թարգմանութեամբ՝ աւելցնելով նաեւ անոր բնազրին հարազատ նմանազրութիւնը (կէս մեծութիւն):

Յիշեալ «թէզբէրէ»ն ստացած է կարնեցի երեւելի «Մարրաֆ» Մահտեսի Մանուկ Աստուածատուրեան (Ալլահվէրտի Ամիրայ, 1756 – 1820) հիճրէթի 1221 (1802) թուականին:



Երգումուս Խիտավէրտի օլուու  
Մանուկ

Մէսփուր Սարրաֆ թափէսինտէն օլուու աւ իհթիեար վէ բիճալը Տէվլէթի Ալլահ տաիրէլէրինէ խըստէթի տէրքեար օլմաղլա էնի իսլամլն բաքիր օլտուղու պարկիր հէյթին միւշապին օլմամաք իւզէրէ պարկիրէ սիւլար օլմասընա քիմէսնէ թարաֆընտան միւմանաթ օլընմամաք իւչիւն իշպու թէզբէրէ վէրիւտի

19 ձէմագիէլէվէլ 221